

ԼԵՁՈՒՄԳԻՏԵԿԱՆ

ԱՐԾԱՅԻ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ(°)

Ոսկեդարից յետոյ հայերէնի բարեւըր-
ջութեան առաջին աստիճանը արծաթի դա-
րի լեզուն է:

Արծաթի դար ենք կոչում այն շրջանը՝
որ անմիջապէս յաջորդում է Ոսկեդարին,
սկսելով 450 թուից, Մատենագրութեան
պատմութեան մէջ սովորութիւն է՝ ինչպէս
Ոսկեդարը ընծայել առաջին թարգմանիչ-
ները (Մեսրոպ, Սահակ և իրենց աշակերտ-
ները), նոյնպէս և Արծաթի դարը ընծայել
հրկրորդ թարգմանիչներին, այն է Սահակի
և Մեսրոպի աշակերտների աշակերտներին:

Ոսկեդարի եւ հայերէնի յատկութեանց
մասին խոսելու ժամանակ՝ բնականօրէն և
զուգընթացաբար պիտի դնէինք Արծաթի
հայերէնի յատկութիւնները, այսպէս օրի-
նակ մի խումբ նոր արձատական բաների
երևուածը (փառքամ, հրաւ, փեքակ, կնն-
ցալ), բառերի տարբեր ձևը (պատասխան,
հիւսիս, մասնիկներ, ածանցներ ու բառ-
դուրեմանց մօր ձևեր) (ինչպէս պատաս-
խանել, աղօթել, անգարծելի, պատասխա-
նասցուրիւն, փառասեղ ևն.): Այս բոլորի
մասին նորից խօսել մի առ մի աւելորդ է:
Այստեղ պէտք է քննենք մի միայն այն
հարցը, թէ ինչի՞ց են յառաջացել այդ տար-
բերութիւնները Արծաթի հայերէնի մէջ:
Հին բանասէրները այդ բոլորը բացատրում
էին անշա՞նթեմք: Արշակունեաց պետու-
թեան կործանումով և հայ քաղաքական
կեանքի անկումով, ընկնում է հայ գպրու-
ցը, հայկական կրթութիւնը, որի արդիւն-
քը լինում է և հայերեն լեզուի անկումը:
Բայց այս բացատրութիւնը նախ լեզուաբա-
նական արժանիք չունի, երկրորդ՝ ենթա-
դրել է տալիս որ զբաբարը մի արուեստա-
կան լեզու էր, որ Սահակն ու Մեսրոպը
հնարելով՝ տարածեցին Հայաստանում՝ ի-
րենց հիմնած դպրոցների միջոցով:

Չհաշուելով թիւ 3 նշանակած նախա-
մասնիկները, որոնք զբաղան մի խմբակի

արուեստական ձևերն են, և որոնց մասին
խօսելու ենք Գլուխ ԺԹ. Արծաթի դարի
մնացեալ բոլոր իւրայատուկ ձևերը ունեն
երկու ծագում:

1. — Այն ձևերը՝ որոնք բոլորովին նոր
են Արծաթի դարի հայերէնում, կամ նոր
փոխառութիւններ են իրանական լեզուից
և կամ հայերէն գաւառական ձևեր, որոնք
Ոսկեդարուն դեռ գոյւրս եկած չէին իրենց
անձուկ շրջանակից և Արծաթի դարուն մի-
այն տարածուելով Հայաստանի ուրիշ մա-
սերում, դարձան ընդհանուր սեպականու-
թիւն և մտան զբաւոր լեզուի մէջ:

2. — Այն ձևերը՝ որոնք ընդհանրապէս
նոյն են Ոսկեդարեան ձևերի հետ և նրան-
ցից մասամբ միայն՝ տարբերում են, ար-
դիւնք են լեզուի յետագայ զարգացման,
նմանաբանութեան (analogie), ընդհանրաց-
ման (généralisation) և այլ լեզուաբանական
օրէնքների:

Առաջին կարգին են պատկանում փառ-
քամ, փեքակ, հրաւ, վսեմ, վեհ ևն. բա-
ռերը՝ օրոնցից ուսանց յայտնապէս գիտենք՝
որ պարսկական փոխառութիւն են, ինչպէս
փեքակ, վեհ, միւսները թւում են թէ պարս-
կերէն պիտի լինեն, ինչպէս հրաւ, վսեմ,
խակ բոլորն էլ ընդհանրապէս գաւառական
ձևեր են: Նոյնը պէտք է հասկանանք նաև
արհեստ, պատասխան, արծիւ, հիւսիս և
նման բառերի համար: Պատասխանի բառի
համար յատկապէս պէտք է յիշել որ դա
ներկայացնում է իրանական մի բարբառ,
մինչդեռ պատասխան մի ուրիշ բարբառ
(տե՛ս վերը):

Երկրորդ կարգին են պատկանում Ար-
ծաթի դարի հայերէնի մնացեալ առանձնա-
յատկութիւնները: Այսպէս՝ երբ ամեն բառը
դարձել է ընդհանուր գեբադրական մասնիկ,
դա արդիւնք է ընդհանրացման, ամենագեհ
բառը որ նշանակում էր «ամէն բան գիտ-
ցող», կարելի և շատ բնական էր հասկա-
նալ նաև «ամենից աւելի գիտուն», այս-
պէս հասկանալուց յետոյ մասնիկը պատ-
բառ էր և կարելի էր ամէն մի ածականի
վրայ կպցնել՝ վայելուչ ձևով: — Երբ կա-
յին Տիգրանունի, Համազասպունի, Սմբա-
տունի ևն. իգական անունները, անբանական
չէր հետեցնել թէ ուրեմն — ունի իգականի
մասնիկ է. այս գործածութիւնը ուսումնա-
կանների արուեստական հնարքն է և ո՛չ

(°) Շառնակապուիւն՝ մեծամուն հեղինակի «Պատ-
մութիւն Հայ Լեզուի» գործին (ԺԵ. Գլուխ):

բնիկ ժողովրդական։ — Շատ կանոնաւոր է այլին և ելի մասնիկներէ գործածութիւնը. երբ գործածական էին ցամաքային, հիւսիսային ևն. ձեւերը, միօրինակութեամբ օրէնքով կարելի պիտի լինէր ստել նաեւ աստուածային, մարդկային ևն., այսպէս այլին մասնիկը դարձաւ աւելի ընդհանուր, իսկ այլան հոմանիշը տեղի ունեց գոնէ մասամբ։ Ամէն լեզուի մէջ էլ հոմանիշներէ մրցումը յառաջացնում է կամ իմաստի տարբերացում և կամ եթէ այդ կարելի և կարեւոր է, մէկի կամ միւսի ջնջումը։ — Աւելի բնական է — ելի մասնիկի գործածութիւնը. երբ ասում էին տարժելի, փոփոխելի, օսելի, ամենահեշտ ձեռք կարելի պիտի լինէր ստել բացասական ան մասնիկի պարզ յաւելմամբ՝ անցումովի, անփոփոխելի, անօսանելի ևն.։ Դեռ կարելի է կարծել որ տարբերութիւն դրուած լինի անցում և անցումովի, անփոփոխ և անփոփոխելի ևն.։ Զեւերի մէջ. առաջինները նրանք են՝ որ ինքնին ախպէս են, երկրորդները՝ ուրիշի միջոցով։ Այսպէս՝ անցումը չոր ինքնին իր տեղից չի շարժուում, անցումովի «այն» օրին չի կարելի շարժել։

— Շատ բնական և կանոնաւոր է նոյնպէս — իլ ձեռքով անորոշի կազմութիւնը, եթէ սիրեմ ապիւս էր սիրել, խաղամ տուիս էր խաղալ և բողբոմ տալիս էր բողբոլ, ինչու խօսիմ օտը խօսել և այսպիսով էլ շփոթութիւն յառաջացնէր և և ք լծորդութեանց մէջ։ Զկար աւելի բնական ու կանոնաւոր բան՝ քան խօսիլ ձեռքով անորոշի յօրինումը, թէ և այս դէպքում անկանոն պիտի մնային հաղովհալ. խօսելով, խօսելով ձեւերը, փոխանակ խօսելով, խօսելով։

Ասացումներէ տեղ առանձին բայեր գործածելու սովորութիւնը (պատասխանել, աղօթել՝ փոխանակ պատասխանի առնել, աղօթս առնել) կարող է յառաջացած լինել կամ որ և է գաւառական ձեւի և կամ բնական զարգացմամբ։ Մենք էլ սրանից քառորդ դար առաջ գործի էինք անում թէյի մէջ շաքար գցել ասացումը, բայց հիմա արդէն սովորական է դարձել շաքարել միակտուր բայը։

Ոսկեդարեան յատկութիւններէ մի քանիսը այնպէս են՝ որ նոյն իսկ Ոսկեդարի մէջ թաքնածակ չեն. օրինակ՝ երբ ասում ենք քննող և նալ ձեռքով դերբայների փո-

խարէն գործ են անում յարբերականով միասին դիմաւոր բայեր (որ գործեն, փոխանակ գործողն, եւ որ գործիք փոխանակ գործեալն), չի նշանակում. թէ ող և ետլ ձեռքով դերբայները ի սպառ գոյութիւն չունեն Ոսկեդարի մէջ։ Եւ այդպէս երբ ասում ենք թէ երկրորդի և քաղաքների անունները Ոսկեդարում յաճախ գործ են անում յատկացուցիչով (ֆաղաֆ Հոսովալեցոց փոխանակ Հոսով ևւ առխարհ Պաղեսթինացոց փոխանակ Պաղեսթին), չի նշանակում թէ բուն անունները ի սպառ անգործածական են։ Արծաթ դարի գործն է հոգել ուրիշն, այս և նման դէպքերում. ծանօթ, բայց քիչ գործածական մի ձեռքով ընդհանրացնել, աւելի սովորական դարձնել։

Այս բոլորից հետեւում է որ Արծաթի դարի հայերէնը ո՛չ թէ Ոսկեդարեան հայերէնի աղաւաղումը կամ անկումն է, յառաջացած քաղաքական կեանքի անկման պատճառով, այլ լեզուի բնական անձան ու բաւերշըրութեան հետեւալքը, որի մէջ գործն դերբայներն ընդհանրացում, միօրինակութիւն, պարզացում և նման լեզուաբանական օրէնքներ, որոնցմով կառավարւում են բոլոր լեզուները։ Իսկ եթէ մէկը այսօր աւելի համ աւան Ոսկեդարեան մի գրուածքից քան թէ Արծաթի դարի հայերէնից, դրա պատճառը նախ՝ առաջին թարգմանիչների արուեստն է, որ անհասական գործ է և ոչ թէ լեզուի քերականական յօրինուածութեան արգիւնք, և երկրորդ՝ ընթերցողի ճաշակն է, որ կարող է ըստ կրթութեան և ըստ սովորութեան անձից անձ տարբեր լինել։ Արծաթի հայերէնն էլ՝ արուեստագէտ հեղինակի գրչի տակ՝ կարող է գուրս գալ այնպէս գեղեցիկ ու ճաշակաւոր, ինչպէս Ոսկեդարի հայերէնն է։

Անուրանալի է որ ոչ Ոսկեդարեան հեղինակների մօտ կան բազմաթիւ անհարթութիւններ, լեզուի սխալներ, որոնց պատճառով էլ մենք վատ գաղափար ենք կազմում նրանց մասին, բայց դրանք նրանից են որ գործ են անել արուեստական լեզու, ո՛չ ժողովուրդի բարբառը։ Երբ ժողովուրդը խօսում է իր լեզուի, ինչքան էլ ազէտ լինի, դարձեալ ճիշտ կը խօսի, երբ օտուում նախանը կը խօսի ուրիշի լեզուն, ինչքան էլ ճիշտ խօսի, դարձեալ սխալ կը խօսի։ Շատ ազգեր ունեն Ոսկեդար, բայց դա նրանց կուլտուրական կեանքի ոսկեդարն է։

ԳՐԹՆ՝ Հ. ԱՅԼԱՌԵԱՆ